ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3738-Ա « 12 » սեպտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.20 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՔՐԻՍՏԻՆԵ ԴՈՐՎԱՐԴԻ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2025 թվականի սեպտեմբերի 3-ի N 402 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2025 թվականի սեպտեմբերի 9-ի N 02/09.2/29503-2025 գրությունը՝

1. Քրիստինե Դորվարդի Դումանյանին՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից նշանակել «Երևանի Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2030 թվականի սեպտեմբերի 15-ը ներառյալ և ազատել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ